
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՐԴՈՒ ՆՈՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԻՋՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հասարակության զարգացման անցումային փուլերում, երբ սոցիալական կյանքը ենթարկվում է արմատական փոխակերպումների, մարդը ներքաշվում է բարդ և հակասական գործընթացների հորձանուտ՝ ենթարկվելով լրջագույն փորձությունների: Ֆրանսիացի նշանավոր մարդաբան Տեյար դը Շարդենի պատկերավոր խոսքերով ասած՝ այդ մեծ խաղում մարդը միաժամանակ և՛ խաղացողի, և՛ խաղաքարտի, և՛ խաղադրամի դեր է կատարում: Եթե նա սեղանից վեր կենա, խաղը կընդհատվի¹: Դա նշանակում է, որ ժամանակի պահանջով առաջադրված բոլոր խնդիրները պետք է լուծվեն մարդու միջոցով և նրա «հաշվին»: Այս դեպքում մարդու առջև դրվում է հասարակության անցումային շրջանի պահանջներին համարժեք վերափոխվելու, նոր ընդունակություններ դրսևորելու, անցյալի ժառանգությունը և փորձը նորովի իմաստավորելու, գնահատելու և հետագա զարգացման առավել արդյունավետ ուղիներ որոնելու բարդ խնդիր: Նա մասնավորապես սոցիոմշակութային նոր պայմաններում պետք է կարողանա դիմակայել հնարավոր մարտահրավերներին և փորձություններին: Մենք պետք է գիտակցենք, իրավացիորեն նշում է Գ. Կիսելյովը, որ մեր ապագան կախված է ոչ միայն պատմության այս կամ այն օրենքից, այլև մեր գիտակցության և բանականության վիճակից, նրա հասունության մակարդակից: Այլ կերպ ասած՝ կայացման ճանապարհին մարդը ոչ միայն չպետք է հաշտվի և ենթարկվի իրերի օբյեկտիվ ընթացքին ու բնական և սոցիալական ուժերի կույր տարերքին, այլև, մշտապես ստեղծագործական ջանքեր գործադրելով, կատարի բարոյական օրենքներին համաձայն աշխարհը վերափոխելու իր մարդկային պարտքը և դրանով իսկ արժանի դառնա ավելի լավ ապագայի²:

Գիտության և տեխնիկայի զարգացման շնորհիվ մարդկությունը վիթխարի առաջընթաց է ապրել: Փոխվել է նաև մարդն իր մտավոր ընդունակություններով, գործնական հատկություններով, մասնագիտական առումով դարձել ավելի իրավասու: Բայց այդ «առաջընթացը» շատ դեպքերում ձեռք է բերվել հոգևորի և բարոյականի կորստի գնով: Այդ ճգնաժամը հաղթահարելու համար մարդը պետք է հարազատ մնա իր էությանը, աշխարհը վերափոխի մարդասիրական արժեքներին համապատասխան և դա ընդունի որպես հասարակական առաջընթացի գլխավոր չափանիշ: Այստեղ տեղին է հիշել Նիկոլայ Բերոյանի՝ մարդուն ուղղված հետևյալ խոսքերը. «Իմ հավատից բխած գործնական եզրակացությունն է. համաշխարհային պատմության մեջ մինչ այժմ եղած այս ամենաանմարդկային դարաշրջաններից մեկում եղե՛ք մարդկային: Պահպանե՛ք մարդու կերպարը, դա Աստծու կերպարն է: Ես շատ եմ հիասթափվել մարդկանցից, ես տեսել եմ

¹ Տե՛ս **Տեյար դը Շարդեն**, Մարդու ֆենոմենը, Եր., 1998, էջ 195:

² Տե՛ս **Կիսելև Գ. Ս.** Свобода и эволюция // «Вопросы философии», 2005, № 5, էջ 11:

ստորություն, խաբեություն, չարություն, դաժանություն, դավաճանություն, բայց բոլոր դեպքերում իմ մեջ պահպանվել է մարդու նկատմամբ հավատը»³:

Մարդն էությանը հակադրությունների կրող է, նրա մոտ կա և՛ չարը, և՛ բարին, և՛ մարդկայինը, և՛ անասնականը: Այս հակասության հետ է կապված նրա կեցության ողբերգականությունը: Մարդիկ շատ հաճախ են անձնատուր լինում իրենց թուլություններին, գայթակղվում արտաքին հրապուրանքներով և կորցնում իրենց մարդկային կերպարը: Թեև շեղված վարքի մի շարք դրսևորումներ ունեն կենսաբանական հիմքեր, բայց, բոլոր դեպքերում, դրանք փոխակերպվում և ի հայտ են գալիս սոցիալական դրսևորումներով: Այս առնչությամբ կարևորվում է այն խնդիրը, թե անցումային շրջանի վերակառուցողական գործընթացների արդյունքում ստեղծվող գոյության տնտեսական, քաղաքական, սոցիալական պայմանները և ձևավորվող բարոյահոգեբանական մթնոլորտը ինչքանով են համապատասխանում մարդու պահանջներին ու շահերին և նպաստում նրա ստեղծագործական ուժերի ազատ զարգացմանը:

Փոխակերպվող հասարակության գլխավոր նպատակը արդյունավետ սոցիալական համակարգի և մարդու ներուժի իրացման ավելի նպաստավոր պայմանների ձևավորումն է: Բայց հասարակության անցումային շրջանը, որպես կանոն, ուղեկցվում է բարդություններով, դժվարություններով ու նոր փորձություններով: Այստեղ ամեն ինչ չէ, որ կարելի է կանխատեսել և մարդկանց գործադրած ջանքերին համարժեք արդյունքի հասնել: Որպեսզի զարգացման գործընթացները լինեն առավել արդյունավետ, անհրաժեշտ է հաշվի առնել սոցիալական օրգանիզմին բնորոշ «օբյեկտիվ» օրենքների պահանջները և լիարժեք օգտագործել հասարակության ինքնակազմակերպման, ինքնազարգացման ներքին բոլոր հնարավորությունները: Փոխակերպվող հասարակություններում վերակառուցողական գործընթացները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և քաղաքական նոր կողմնորոշումների ձևավորումը ընթանում են հնի մերժման, նրա պահպանողական ուժի ազդեցության հաղթահարման և դժվարություններով ուղեկցվող նորի հաստատման պայմաններում: Ընդ որում, հենց այդ «նորի» հաստատման արդյունքում, ժամանակի ոգուն համապատասխան տեղի ունեցող դրական տեղաշարժերի հետ զուգընթաց, ի հայտ են գալիս նաև բացասական այնպիսի երևույթներ, որոնք ավելի են սրում հասարակության ներքին հակասությունները, խորացնում սոցիալական անհավասարությունը, մարդկային հարաբերությունները դարձնում ավելի լարված ու կոնֆլիկտային:

Մարդկությունն այժմ գտնվում է իր հնարավորությունների և ուժերի վերադասավորման և հետագա առաջընթացի առավել արդյունավետ ուղիների որոնման պատասխանատու շրջանում: 20-րդ դարը հակասական, լարված, ողբերգական իրադարձություններով ու փորձություններով լի մի շրջան էր, որը 21-րդ դարին փոխանցեց ոչ միայն նյութական ու հոգևոր մեծ ժառանգություն, ուսանելի դասեր, այլև խորը հակասություններ ու վտանգներ կրող, բազում բարդ ու կենսական հիմնախնդիրներ: Մարդկության գիտակցության մեջ աստիճանաբար ամրապնդվում է այն համոզմունքը, որ հասարակության առաջընթացն ապահովող, մարդու մեջ «մարդկայինը» պահպանող, հումանիստական նոր քաղաքակրթություն ձևավորող գործոնների համակարգում նյութականի, արտաքին աշխարհի

³ "Мир философии". Т. 2. М., 1991, с. 71.

«առարկայական-իրային» հզորությունների կողքին ավելի ու ավելի որոշիչ դեր են կատարում հոգևոր ու բարոյական արժեքները և դրանցով չափվող մարդու հոգևոր աշխարհի ձևավորման ու հարստացման խնդիրները: Այս նոր իրողությունների օբյեկտիվ պահանջով մարդկությունն արդեն թևակոխել է զարգացման «ինտելեկտուալ» վերաբաժանման շրջանը, որն անմիջականորեն առնչվում է մարդու հոգևոր ներուժի բազմակողմանի դրսևորմանն ու իրացմանը: Պատմության նախորդ փուլերում ավելի շատ քանակական զարգացման հարցեր են լուծվել: Այժմ որոշիչ է դառնում որակական չափանիշներով բնութագրվող ինտենսիվ զարգացման խնդիրը, ինչն անմիջապես առնչվում է մարդու մտավոր ու ստեղծագործական կարողությունների առավել արդյունավետ զարգացմանը և ռացիոնալ օգտագործմանը: Մարդու հոգևոր էներգիան ըստ էության անսպառ է, այն գոյանում և իրացվում է ընդլայնված վերարտադրության օրենքով և հանդես գալիս որպես մարդկանց միավորող, հավաքական ուժ ձևավորող և հասարակական արտադրության մեջ իր հարաճուն դերը հաստատող կարևոր գործոն:

Մարդը հասարակական հարաբերությունների մեջ է ներառվում իր բազմաչափ էության բոլոր դրսևորումներով: Նրա կյանքը փորձություններով լի անհամաչափ ու հակասական զարգացման մի գործընթաց է, որը ենթարկվում է բնական և սոցիալական էվոլյուցիայի օրենքներին և արտահայտվում ինչպես բնական իմացության, այնպես էլ էկզիստենցիալ հոգեկան վերապրումի անհատական առանձնահատկություններով: Մարդու առաջընթացի չափը ամենից առաջ որոշվում է, թե ինչքանով է նրան հաջողվում կյանքի նոր պահանջներին համապատասխան վերափոխվել և ներդաշնակ հարաբերություն հաստատել իր գոյության արտաքին և ներքին աշխարհների միջև: Ժամանակակից մարդու համար դա թերևս ամենադժվարին խնդիրն է, քանի որ նրա կեցության այդ երկու սուբստանցիոնալ հիմքերը անհամաչափ են զարգանում, և հնարավոր չէ մինչև վերջ հաղթահարել դրանց միջև անընդհատ ծագող հակասությունները: Մարդու գոյության աշխարհը սոցիալական տարածության և ժամանակի մեջ անընդհատ ընդլայնվող, վերաստեղծվող, վերաիմաստավորվող հասարակական այն միջավայրն է, որի հետ մարդը հարաբերվում է ոչ այնքան անմիջական, որքան միջնորդավորված ձևով: Հենց այդ պատճառով էլ մարդու համար ավելի է դժվարանում արագ փոփոխվող և բարդացող օբյեկտիվ իրականության իմացության, այնտեղ ճիշտ կողմնորոշվելու և այն իր պահանջմունքներին համարժեք վերափոխելու խնդիրը: Այն աշխարհը, որ մենք տեսնում ենք, հենց այն է, ինչ մենք ստեղծել ենք մեր մտքի օգնությամբ, մոդելավորել, կադապարել մեր մտածողության մեջ⁴: Եվ քանի որ մարդիկ ինչպես մտածում, այնպես էլ գործում են, այդ պատճառով էլ նրանց գործունեության արդյունքի մեջ աշխարհի մասին պատկերացումները «սուբյեկտիվացված» են: Ուստի աշխարհի մասին մարդու գիտելիքների հավաստիության և «օբյեկտիվության» աստիճանը պայմանավորված է ճիշտ մտածողությամբ: Գիշտ մտածելը մարդուն հնարավորություն է տալիս ճիշտ կողմնորոշվելու, հաշվենկատ գործելու և լավ արդյունքի հասնելու:

Մտածողությունը օբյեկտիվ իրականության արտացոլման հիմնական միջոցն է, մարդու մեծագույն արժանիքն ու առավելությունը: Բայց մտա-

⁴ Տե՛ս Темплтон Д. Всемиральные законы жизни. М., 1999, էջ 74:

ծելու ընդունակությունը միայն մարդու մենաշնորհը չէ: Մեքենան նույնպես կարող է մտածել: «Մտածող մեքենաները» իրենց վրա վերցնում են մարդկային ուղեղին բնորոշ մտածողության որոշ գործառնություններ, թեև դրանք ավելի շատ գործում են ձևական տրամաբանության օրենքներով: Բայց ժամանակակից բարդ ու բազմակողմանի հարաբերություններում ամենախելոք մեքենան անգամ չի կարող ամբողջովին փոխարինել մարդուն, քանի որ այն զուրկ է գիտակցությունից և զգացմունքներից: Մարդն իր ստեղծագործական կարողություններով գերազանցում է ամենակատարյալ մեքենաներին և ունի այնպիսի հատկություններ, որպիսիք մեքենաները չունեն: Մարդու այդ առանձնահատուկ ունակությունը նրա զգացմունքների, երևակայության, ինտուիցիայի և ներզգացողության շնորհիվ է:

Կիրեռնետիկայի հիմնադիր Նորբերտ Վիները «Արարիչը և ռոբոտը» աշխատության մեջ գրում է. «Մեքենապաշտության հոգեբանության տեր մարդիկ հաճախ սնվում են այն պատրանքով, թե արդի զարգացած և ավտոմատացված աշխարհում պահանջվում է ավելի քիչ հնարամտություն, և հուսով են, որ ավտոմատները, այսինքն՝ մեքենաները, իրենց վրա կվերցնեն մեր մտավոր գործունեության առավել դժվար մասը և կմտածեն մեր փոխարեն: Սա ակնհայտ մոլորություն է: Ապագան քիչ է հուսադրում նրանց, ովքեր սպասում են, որ մեր նոր մեխանիկական ստրուկները մեզ համար կստեղծեն աշխարհ, որտեղ մենք ազատ կլինենք մտածելու անհրաժեշտությունից... Ապագայի աշխարհը էլ ավելի դաժան պայքար կպահանջի մեր բանականության դեմ, նա մեզ թույլ չի տա պառկել մեջքի վրա՝ սպասելով մեր ռոբոտ ստրուկների հայտնվելուն»⁵:

Մարդու էվոլյուցիայի բնական ընթացքը ենթադրում է գիտակցության անընդհատ զարգացում, որը համակարգաստեղծ գործառնությամբ է իրականացնում մարդկային կեցության բոլոր ոլորտներում և մակարդակներում: Գիտակցությունը ընդլայնված վերարտադրության օրենքով գոյացող հոգևոր էներգիայի ամբողջական կրողն է: «Տիեզերքի բոլոր էներգիաներից միակը լինելով՝ գիտակցությունը մի մեծություն է, որի վերաբերյալ անընդունելի և նույնիսկ հակասական է այն ենթադրությունը, թե այն կարող է ինչ-որ սահմանագծի հասնել կամ ետ շրջվել: Ճակատագրական պահեր ճանապարհին՝ որքան ուզեք: Բայց անհնար է կանգ առնել կամ ետ դառնալ այն պարզ պատճառով, որ ներքին հայեցողության ամեն զարգացում հիմնականում սկիզբ է դնում մի նոր հայեցողության, որն ընդգրկում է բոլոր մյուսները և էլ ավելի առաջ տանում»⁶: Ի դեպ՝ գիտական միտքը դեռևս քիչ բան գիտի գիտակցության, մտածողության անմիջական արդյունք հանդիսացող հոգևոր էներգիայի գոյացման, վերարտադրման և դրանով պայմանավորված՝ մարդու ներքին հոգևոր աշխարհի ձևավորման «օրենքների», ինչպես նաև այդ գործընթացի մեջ «տրանսցենդենտալ» երևույթների ներառվածության մասին, որոնք առնչվում են մարդկային սոցիալական ու հոգևոր կեցությունն ու հարաբերություններն իմաստավորող այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են սերը, հավատը, հույսը, բարությունը, արդարությունը, մարդասիրությունը, լավատեսությունը և այլն: Որպես մարդկային հարաբերությունների մեջ ռեալ գործող արժեքներ՝ դրանք նպաստում են մարդկանց հոգևոր մերձեցմանը:

⁵ **Винер Н.** Творец и робот // "Новый мир", 1965, № 2, с. 17.

⁶ **Տեյար դը Շարդեն**, նշվ. աշխ., էջ 196:

Թեև պետք է նկատել, որ հոգևոր իմաստով ժամանակակից մարդկությունը ավելի շատ մասնատված է, քան միավորված: Պատահական չէ, որ տարբեր մշակույթների ու քաղաքակրթությունների միջև պարբերաբար ծագում են հակասություններ, ազգամիջյան բախումներ, գաղափարական հակամարտություններ և այլն: Բայց մարդկությունը միշտ էլ միասնության է ձգտել և հավատացել, որ «մտածող երկրի մակերեսին ցրված միլիոնավոր տարրական օջախների միախառնվող կրակներից կառաջանա մի միասնական օջախ»⁷: Դրան հասնելու համար անհրաժեշտ են տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգևոր որոշակի պայմաններ, ինչպես նաև սոցիոմշակութային զարգացման անհրաժեշտ մակարդակ: Տնտեսական կապերի ստեղծման և փոխշահավետ համագործակցության իրականացման առումով աշխարհն այսօր ավելի «միասնական» է, թեև այստեղ նույնպես առկա են հակասություններ, շահերի բախումներ, գոյության նյութական միջոցների անհամաչափ զարգացման և սոցիալական անարդարության միտումներ, հարուստ և աղքատ երկրների միջև ծագող կոնֆլիկտներ և այլն: Այդ երևույթները խախտում են հասարակական արդարության սկզբունքը և բացառում համերաշխ գործող համակարգի ձևավորման հնարավորությունները: Այս դեպքում հասարակությունը հանդես է գալիս որպես իրարից օտարված «մասնավոր անձերի» համախումբ, որոնցից յուրաքանչյուրը, իր հոգսերի մեջ կաղապարվելով, փորձում է ինքնուրույն լուծել իր խնդիրները՝ առանձնանալով անդեն ընդհանուրից: Բայց վաղ թե ուշ մարդը կազատվի այդ պատրանքից և կհասկանա, որ առանց հասարակության և մարդկության օրգանական միասնության չի կարող գոյություն ունենալ, բավարարել իր պահանջմունքները և զարգացնել իր մարդկային ընդունակությունները:

Մարդկության զարգացման հեռանկարի առնչությամբ համաշխարհայնացումը անխուսափելի է օրինաչափ գործընթաց է: Բայց դա պետք է տեղի ունենա անհրաժեշտ պայմանների աստիճանական հասունացման բնականոն ընթացքով: Որպես հավաքական սուբյեկտ՝ մարդկությունը իր պատմական փորձով արդեն գիտակցում է, որ արդյունավետ և կայուն զարգացում կարելի է ապահովել միայն ընդհանուրի ջանքերի միավորման, փոխշահավետ համագործակցության և փոխադարձ վստահության պայմաններում: Այն հնարավորություն կտա ավելի շատ էներգիա, ժամանակ ու միջոցներ խնայել և հաջողությամբ լուծել մարդկության առջև ծառայած կենսական շատ խնդիրներ, ստեղծել մշակութային, քաղաքակրթական արժեքների փոխանակման, հաղորդակցման և հոգևոր մերձեցման ավելի լայն հնարավորություններ: Սակայն համաշխարհայնացման օբյեկտիվ ընթացքը ամենևին էլ չի բացառում տարբեր մշակույթների, ապրելակերպի, ավանդույթների, ազգային հոգեկերտվածքի, հոգեբանության բազմազանության գոյության իրավունքը: Այդ առանձնահատկություններն ավելի են հարստացնում զարգացման համամարդկային փորձը և նպաստում ընդհանուր առաջընթացին: Հասարակական առաջընթաց ապահովող բոլոր գործոնները փոխադարձաբար կապված են միմյանց, ուստի դրանք պետք է մի միասնության մեջ դիտարկել և բացահայտել այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են համակարգային կազմավորումներին: Այս դեպքում անհրաժեշտություն է առաջանում առօրեականի և տեսլականի փոխադարձ կապի

⁷ Նույն տեղում, էջ 222:

մեջ դիտարկել կյանքի իրական ընթացքի բոլոր դրական և բացասական դրսևորումները, գնահատել մարդու ստեղծածը և ուրվագծել առաջընթացի նոր հեռանկար: Դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է մարդաբանական փորձաքննության չափանիշներով որոշել, թե աշխարհի վերափոխման երկարատև էվոլյուցիայի ընթացքում ինչպես է փոխվել մարդը, և նրա ստեղծած գոյության պայմաններն ու զարգացման մակարդակը ինչքանով են բավարարում ժամանակի պահանջներին: Մարդու գործունեության հետևանքով իրողություն դարձած բնապատկերը, երկրապատկերը, այսինքն՝ գոյության բնական և սոցիալական միջավայրը և նրանում ներառված արժեքները արդեն իսկ ընդհանուր պատկերացում են տալիս մարդու զարգացման մակարդակի մասին, իրենք էլ իրենց հերթին արտահայտվում մարդկային որոշակի չափանիշներով:

Արդի քաղաքակրթական իրողությունները փաստում են, որ մարդկությունն ասես կորցրել է ոգու «արիստոկրատիզմը» և այն փոխարինել իրապաշտական, նյութապաշտական, առօրյա պահանջներին ենթակա օգտապաշտական արժեքներով: Շրջադարձային նման պայմաններում շատերը չեն կարողանում հարմարվել «նոր իրավիճակին», ողբերգություն են ապրում և խորապես զգում, որ հայտնվել են իրենց համար հանկարծ օտար ու թշնամի դարձած աշխարհում⁸: Այնուհանդերձ, մարդը գոյատևելու համար շարունակում է պայքարել, ապրել և տանել կյանքի այդ փորձությունները, որպեսզի գտնի իր տեղը հասարակության մեջ: Թեև պետք է նկատել, որ նման իրավիճակներում ոչ բոլորը կարող են դիմանալ կյանքի պարտադրված ֆիզիկական, սոցիալական ու հոգեկան լարվածությանը և քայլել ժամանակի նոր պահանջներին համընթաց: Այս դեպքում որոշակի հակասություն է ստեղծվում մարդուն ներկայացվող հարաճուն պահանջների և դրանց բավարարման նրա իրական հնարավորությունների միջև: Մարդու ներուժի ազատ զարգացման համար անհրաժեշտ են հասարակական որոշակի պայմաններ: Իսկ դրանք կարող են ստեղծվել մարդու կենսագործունեության բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացման շնորհիվ: Դա կարող է տեղի ունենալ ֆիզիկական, սոցիալական ու հոգևոր միասնական էներգիայի ընդլայնված վերարտադրության հիմքի վրա: Գիտության և տեխնիկայի զարգացման նվաճումների օգտագործման, մարդու մտավոր կարողությունների ընդլայնման շնորհիվ մարդկության «էներգետիկ» ռեսուրսները ահռելի չափերի են հասել և նույնիսկ անցել դրանց օգտագործման հասարակական պահանջարկի սահմանը: Այս առնչությամբ ծագում է մարդկության էներգետիկ ռեսուրսների արտադրության և սպառման համամասնությունը օպտիմալ չափի մեջ պահելու խնդիր: Չմոռանանք, սակայն, որ էներգիայի ցանկացած տեսակ գոյանում և վերարտադրվում է իրեն բնորոշ օրենքներով և, հետևաբար, լիովին վերահսկողության չի ենթարկվում: Օրինակ՝ ինչպես չափել մարդկության կուտակած զանգվածային ոչնչացման զենքերի ահռելի ֆիզիկական (և ոչ միայն) ուժը և մարդկությանը սպառնացող դրա վտանգավորության աստիճանը, «սոցիալական էներգիայի» կրող և պահանջարկ չունեցող գործազուրկ աշխատուժի գոյացումը և դրա բացասական հետևանքները և այլն: Որոշակի վերապահումներով նույնը կարելի է ասել նաև հոգևոր էներգիայի մասին: Հասարակական առաջադիմություն ապահովող մարդ-

⁸ Տե՛ս **Блюменкранц М.** О поисках имени и лица... // «Вопросы философии», 2007, № 1, էջ 53:

կության դրական ստեղծագործական ուժերը, որպես կանոն, հոգևոր էներգիայի կրող են: Բայց այդ էներգիան կարող է հանդես գալ նաև իր բացասական կողմերով՝ որպես ապակառուցողական ուժ, մարդկանց ապակողմնորոշող, բանականությունը մթագնող սխալ «տեսությունների», լուսանցքային վարքի և նմանատիպ այլ դրսևորումների տեսքով:

Մարդկային գոյության հիմք հանդիսացող նյութական և հոգևոր էներգիաները փոխակերպված ձևով շարունակում են մեկը մյուսին: Սակայն ամենախորքային մակարդակում, ինչպես նշում է Տեյար դը Շարդենը, աշխարհում ինչ-որ ձևով պետք է գոյություն ունենա և գործի մի միասնական էներգիա: Նման էներգիայի ձևավորման կենտրոնը մարդու հոգին է⁹: Իսկ դա նշանակում է, որ մարդկային էներգիայի գոյացման հարցը քննարկելիս պետք է նորովի իմաստավորել մարդու հոգևոր աշխարհում «աստվածայինի» ներկայության, գիտության և կրոնի փոխհարաբերության հիմնահարցերը: Աթեիստական տեսությունները կրոնի և գիտության, գիտական գիտելիքի և հավատի կապը դիտում են որպես հակադրություն, մեկը մյուսին բացասող աշխարհայացքային դիրքորոշումներ, մինչդեռ դրանք ճանաչողության նույն ամբողջական գործընթացի երկու միավորված կողմերն են, որոնք լրացնում են միմյանց և ավելի ընդլայնում մարդու իմացության հնարավորությունները: Բանն այն է, որ մարդու կեցության իմաստի, նրա էության ըմբռնման շատ իրողություններ և գաղտնիքներ անհասանելի են գիտությանը: Դրանք կարող են հասու լինել միայն հավատի ուժով, մտքի պայծառացման ներգայական մղումով ու երևակայությամբ: Ահա թե ինչու գիտությունը հաճախ լրացվում է միստիկայով և կրոնով: Կարելի է ասել, որ գիտության և կրոնի դիմաբախումը զուտ արտաքին է: Ի դեպ, մոտ երկու հարյուրամյակ տևած կրքոտ պայքարից հետո ո՛չ գիտությունը և ո՛չ էլ հավատը չկարողացան միմյանց թուլացնել, այլ հակառակը՝ ակնհայտ դարձավ, որ նրանցից ոչ մեկն առանց մյուսի չի կարող բնականոն զարգանալ այն պարզ պատճառով, որ երկուսն էլ նույն կյանքով են ներշնչվում¹⁰: Գիտական և կրոնական աշխարհըմբռնումները, ի սկզբանե միասնական լինելով, հանգամանքների բերումով զարգացել են մեկը մյուսից անկախ: 20-րդ դարում մարդկության հոգևոր կյանքի նոր իրողությունների, աշխարհայացքային նոր կողմնորոշումների պարտադրանքով և ժամանակի թելադրանքով փորձ արվեց նորովի իմաստավորելու կրոնի՝ որպես ճանաչողական և բարոյական մեծ ներուժ պարունակող հոգևոր արժեքի դերը և գիտության հետ նրա փոխադարձ կապը: Այդ առնչությամբ անհրաժեշտություն առաջացավ Աստծո և մարդկային բնության մասին ավանդական հայեցակարգերը վերածնակերպելու էվոլյուցիոն տեսության լույսի ներքո¹¹:

Ժամանակակից մարդը գործ ունի գիտական և ոչ գիտական տեղեկատվության վիթխարի հոսքերի հետ, որոնց յուրացումը պահանջում է մտավոր բարձր լարվածություն, դրանց մշակման տեխնիկական միջոցների տիրապետում, նրանում արագ ու ճիշտ կողմնորոշվելու ընդունակություն և այլն: Աշխարհի մասին ձեռք բերած գիտելիքների ծավալի անընդհատ մեծացումը մարդուն հնարավորություն է տալիս ընդլայնելու մտահո-

⁹ Տե՛ս **Տեյար դը Շարդեն**, նշվ. աշխ., էջ 244:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 245:

¹¹ Տե՛ս **Осипов Ю. С.** Два направления человеческого бытия // «Человек», 1999, № 5, էջ 10:

րիզոնը, բացահայտելու նոր երևույթներ ու հատկություններ, զարգացման նոր միտումներ և այլն: Դրա շնորհիվ աշխարհն ավելի է «բացվում» մարդու առջև, թեև ոչ այնքան իսկական դեմքով, որքան աղավաղված ու քողարկված, կեղծ ու շինծու պայմանականություններով, անվստահություն ու տագնապ հարուցող խորհրդավորություններով, զարգացման հեռանկարի անորոշ վիճակով և այլն: Նման պայմաններում ավելի է դժվարանում ճշմարտությունը բացահայտելու խնդիրը: Թերևս դրանով կարելի է բացատրել այն իրողությունը, որ ցանկացած ուղորտում մարդկանց գործադրած ջանքերի հատուցումը համարժեք չէ ձեռք բերած արդյունքներին: Այս առնչությամբ տեղին է վկայակոչել Ֆ. Նիցշեի այն միտքը, որ աշխարհը մշտապես փոփոխվող կեղծություն է և երբեք չի մոտենում ճշմարտությանը: Պատճառն այն է, որ երկրի գոյությունը և այնտեղ մարդու կյանքը զուրկ են իմաստից, և այդ «անիմաստ» աշխարհում կյանքը ապրելու համար հարկավոր են պատրանքներ և ինքնախաբեություններ: Թույլերի համար դրանք սփոփանք են և թույլ են տալիս տանելու կյանքի ծանրությունները, մինչդեռ ուժեղների համար դրանք միջոց են իրենց իշխանության կանքը հաստատելու համար¹²:

Անընդհատ վերափոխվող և բարդացող արդի քաղաքակրթությունը մշտապես նոր պահանջներ է դնում մարդու առջև: Դրանք կատարել և դրանցով ղեկավարվել կարող է միայն բազմակողմանի զարգացած, կամային բարձր հատկություններով օժտված «ուժեղ» մարդը՝ «գերմարդը»: Նիցշեի «Աստված մահացել է» հայտնի արտահայտությունից հետո մարդկանց սկսել են մխիթարել այն պատրանքով, որ Աստծու տեղը կարող է և պետք է զբաղեցնի բարձր առաքինություններով և այլ որակներով օժտված «գերմարդը»: Բայց հետագայում պարզվեց, որ այդ «գերմարդը» օժտված է վայրի գազանի անզուսպ բնազդներին անձնատուր եղած էակի հատկանիշներով: Ըստ էության, Նիցշեի պատկերած «գերմարդը» ներկայացվում է որպես «կենսաբանորեն ուժեղ» մարդ, որը պետք է «գոյության կռվի» օրենքով իշխի թույլերի վրա, քանզի այդ «իրավունքը» նրան տվել է բնությունը:

«Գերմարդու» այս գաղափարն անընդունելի է ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական ու բարոյական առումներով: Բանն այն է, որ ռեալ աշխարհում ապրող մարդը չի կարող գերբնական ուժի տեր լինել: Մարդ արարածը շատ թուլություններ ունի, որոնցից լիովին չի կարող ազատվել: Ավելին, ինչքան հզորանում և բարդանում է մարդու գոյության արտաքին աշխարհը, այնքան այդ աշխարհի նկատմամբ նա զգում է իր անզորությունը: Եթե մի պահ նույնիսկ պատկերացնենք, որ մարդը հասել է իր հնարավորությունների իրացման ամենաբարձր աստիճանին, միևնույնն է, նա չի կարող ինքն իրենից վեր բարձրանալ, անցնել իր ուժերի «բնական» սահմանը: Ուստի «գերմարդը» ոչ թե մարդուց տարբերվող մի նոր էակ է, այլ մարդ, որը լիովին կազմավորված մթնոլորտում կարող է հասնել իր հնարավորությունների գերագույն դրսևորմանը: Ընդ որում, դա ոչ թե ընդհանուր օրինաչափություն է, այլ բացառություն, զարգացման միտում: «Գերմարդը» այդպես էլ մնում է առջևում, որպես անհասանելի իդեալ, փախչող հորիզոն, ընտրյալների համար ուղղություն տվող կարգավորիչ գաղափար, սոցիոմշակութային սահմանը հատող համարձակություն¹³: Ուրեմն՝ ոչ բոլոր մար-

¹² Տե՛ս **Ֆ. Նիցշե**, Բարուց և չարուց անդին, Եր., 1992, էջ 154:

¹³ Տե՛ս **Գуревич П. С.** Иномерность сверхчеловеческого // «Человек», № 6, 2004, էջ 17:

դիկ կարող են հասնել զարգացման «գերագույն» աստիճանին, այսինքն՝ նման զարգացումը չի կարող օրինաչափություն լինել: Բանն այն է, որ մարդու ներուժը ոչ թե անփոփոխ մեծություն է, այլ ժամանակի մեջ անընդհատ ծավալվող, վերարտադրվող, քանակական ու որակական չափանիշներով արտահայտվող զարգացման մի օբյեկտիվ ընթացք, որը երբեք չի ընդհատվում, չի ավարտվում և լիովին չի սպառվում: Դա սերնդից սերունդ վերարտադրվող մարդկային ներուժ է, մարդու լինելիության մի անվերջ գործընթաց, որի համատեքստում ամեն մի նոր սերունդ ժամանակի պահանջին ու հնարավորություններին համապատասխան իր «չափն» է ապահովում: Իսկ այդ չափը որոշվում է մարդու ներուժի նկատմամբ եղած հասարակական պահանջարկով և մարդու անձնային զարգացման ներքին պահանջով: Ամեն մի սերունդ իր ստեղծածով պատմության մեջ որոշակի տեղ է զբաղեցնում, իսկ սերունդների հերթափոխման բնականոն ընթացքը մի ընդհանուր շղթայի մեջ է միահյուսում անցյալը, ներկան և ապագան: Պատմության զարգացման ներքին պահանջով ու տրամաբանությամբ ուրվագծվող առաջընթացի հեռանկարը և իդեալը կարող են հասանելի չլինել յուրաքանչյուր անհատի, բայց հասանելի լինել մարդկային ցեղին: Այս իմաստով մարդկության զարգացմանը նոր թափ հաղորդելու համար անհրաժեշտ է հոգևոր հիմքերի վրա նրանց միավորել և դարձնել հավաքական սուբյեկտ: Մարդու հոգևոր աշխարհը մարմնականի և հոգեկանի, բանականի և իռացիոնալի, առօրեականի և իդեալականի հակադրությունների ամբողջություն է: Դրանք իրենց մեջ կրում են մշտապես ծագող և ժամանակի մեջ կերպարանափոխվող հակասություններ: Ընդ որում, մարդու հոգեկան աշխարհը ոչ մի դարաշրջանում այսքան չի ավերվել ու խաթարվել, ինչքան այսօր: Այս առնչությամբ Բերդյաևը նկատում է, որ «դարի գոլությունը մի փնտրեք քրեական խրոնիկայի մեջ, մենք կողոպտված ենք հոգեպես»¹⁴:

Մարդկությունը փորձություններով ու արհավիրքներով լի մեծ ճանապարհ է անցել, ստեղծել նյութական ու հոգևոր արժեքներ, ձեռք բերել ինքն իրեն և աշխարհը վերափոխելու, կյանքի դժվարությունները հաղթահարելու հարուստ կենսափորձ: Այս իմաստով մարդկության «վերջի» մասին հնչող հոռետեսական կանխատեսումները այնքան էլ հիմնավոր չեն: Բայց ապագայի լավատեսական կանխատեսումները հիմնավոր ու արդարացված կարող են լինել, եթե մարդը դրանց իրականացման միջոցները իր մեջ փնտրի և ընդունի այն պարզ ճշմարտությունը, որ աշխարհի վիճակը իրենով է չափվում և կախված է նրանից, թե «զարգացման» ինչ ուղղվածություն, արժեքային ինչ կողմնորոշումներ կունենա, ինչքանով հաշվի կառնի բնության և հասարակության օբյեկտիվ օրենքների պահանջը: Այս պահանջին համարժեք մարդը պետք է ինքնաճանաչման միջոցով արժևորի իր սեփական անձը և ինքնագնահատումի բարոյական չափանիշով պատասխանատու լինի պատմության առջև և խորապես զգա իր մեծագույն առաքելությունն իրեն պահ տված աշխարհում: Այդպիսին լինելու համար մարդը պետք է ճանաչի իրեն, հենց իրեն դարձնի բոլոր կենսահարաբերությունների չափանիշը, նրանց գնահատությունը տա իր էությանը համապատասխան, աշխարհը կառուցի իրոք մարդկայնորեն, իր բնության պահանջներին համապատասխան, և այդ դեպքում մեր ժամանակի առեղծվածը նա կլուծի: Իսկ աշխարհի ամենամեծ ա-

¹⁴ Семенов В. С. О перспективах человека в XXI столетии // "Вопросы философии", 2005, № 9, с. 35.

ռեղծվածը հենց ինքը՝ մարդն է՝ իր մեջ բազմաթիվ հակասություններ կրող, ինքնաօտարվող, անընդհատ «չբավարարվող», ներքին գոյութենական վերապրումի բոլոր դրսևորումներով արտահայտվող պարադոքսալ էակը:

МИГРАН ХАЧАТРЯН – *Переходное общество и новые испытания человека.* – В статье рассматриваются некоторые аспекты и особенности переходного этапа в развития общества. В процессе коренного преобразования всех сфер общественной жизни от человека требуется проявить новые способности, преодолеть многие трудности, осмыслить опыт прошлого и выбрать наиболее эффективные пути развития общества и самого себя. Уровень развития человека определяется его способностью перестроиться в духе времени и стать во всех сферах общественной жизни подлинным субъектом модернизации. В условиях трансформации общественной системы расширяются возможности проявить многомерную сущность человека, реализовать его творческие задатки. В совокупном результате трансформации общества определяющим фактором выступают духовные силы личности – надежный ориентир общественного прогресса.

MIHRAN KHACHATRYAN – *Society in transition and new challenges facing a human being.* – The paper seeks to study certain aspects of transition period of social development under the light of new human experience. The process of fundamental transition of all aspects of social life forces the individual to evaluate the past experience, to select ways that are more effective for one's own development and the development of the society. In this respect, human development is assessed by the extent to which one manages to reconstruct oneself in time and to become a genuine subject of modernization of all aspects of social life. The paper emphasizes that the transformation of the social system can help reveal the diversity of human nature and expand one's creative potential. The author believes spiritual power and personal qualities to be the determining factors in social progress.